# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն

Երևան 31.07.2025 թ.

2025 թվականի հուլիսի 31-ին՝ ժամը 11:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Սիմոնյան» ԿՀ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Երևանի Կ. Հալաբյան փողոցի 16/2 հասցեում ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախագծի պատվիրատուի կողմից շինարարության համակարգող Սևակ Թահմասյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության տեխնիկա-տնտեսական ցուցանիշները, նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, ներկայացրեց շինարարական աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները, նշեց, որ իրականացվելու է մեքենաների անիվների լվացում հատուկ հարթակների վրա և փոշենստեցում:

Հաշվետվության բնապահպանական մասը ներկայացրեց Արամ Գալոյանը, նա ներկայացրեց համալիրի կառուցման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողի որակի հետ կապված: Նշեց, որ հիմնական ազդեցությունները նախատեսվում են կապված փոշու արտանետումների հետ, որի ազդեցությունները

մեղմացնելու նպատակով նախատեսվել են միջոցառումներ՝ օրինակ, պարբերաբար իրականացվելու է ջրցան: Նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ փոշենստեցումն իրականացվելու է թնդանոթ սարքավորումների միջոցով, որոն արդեն ձեռք են բերել: Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Հարություն Հարությունյանը ընդգծեց առցանց չափիչ սարքերի կարևորությունը փոշու արտանետումների քանակի վերահսկողության հարցում և առաջարկեց շինարարության փուլում ձեռք բերել և կիրառել դրանք: Նախաձեռնողները համաձայնվեցին:

Աջափնյակ վարչական շրջանի ներկայացուցիչները բարձրացրեցին ճանապարհների ծանրաբեռնվածության, ավտոկայանատեղիների հարցը, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ այդ բոլոր հարցերը քննարկվել են և հաշվի առնվել:

Լսմանը մասնակցում էին նաև Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամներ Արշակ Սարգսյանը և Արմենակ Դանիելյանը, ովքեր հետաքրքրվեցին նախատեսվող գործունեության տարածքից մետրոյի նոր կառուցվող կայարանի հեռավորության և հողերի նպատակային նշանակության վերաբերյալ: Նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ նախատեսվող համալիրը չի խանգարում մետրոյի կայարանին, իսկ տարածքի հողը համարվում է «Սիմոնյան» ԿՀ-ի սեփականությունը: Հողի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման է: Քննարկվեց նաև տարածքի կանաչապատման հարցը: Գալոյանը նշեց, որ նախատեսվում է 40 տոկոս և ավելի կանաչապատում իրականացնել, իսկ ինչ վերաբերում է ծառեր հատելուն, ապա հատման ենթակա ծառեր չկան:

Մասնակիցները հետաքրքրվեցին նաև կոյուղու և կեղտաջրերի հեռացման վերաբերյալ, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչը նշեց, որ կեղտաջրերը հեռացվելու են «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները, Երևանի ավագանու անդամներ:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«Սիմոնյան» ԿՀ-ի ներկայացուցիչ՝** **Վ. Ռէյիսյան**